ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ASSESSMENT AND TESTING CENTER"
STATE NON TRADE ORGANIZATION

Երևան, Չայլախյան 4
Հեռ. 57 63 37,
E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4,Yerevan
Tel. 57 63 37,
E-mail: info@atc.am

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելվածի 64-րդ, 67-րդ կետերը, Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի 2024թ. ապրիլի 11-ի թիվ 56-Ա հրամանը՝ «Ռուսաց լեզու», «Տարրական ուսուցման մեթոդիկա», «Տեխնոլոգիա», «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Նախնական զինվորական պատրաստություն /ՆԶՊ/», «Ֆիզկուլտուրա», «Շախմատ» առարկաների ուսուցիչների կամավոր ատեստավորման բողոքարկման հանձնաժողովների կազմը հաստատելու մասին՝ բողոքարկման հանձնաժողովների կողմից նիստ է հրավիրվել 2024թ. ապրիլի 15-ին և 16-ին, և ընդունվել են հետևյալ որոշումները.

«Տարրական ուսուցման մեթոդիկա», «Տեխնոլոգիա», «Երաժշտություն», «Ֆիզկուլտուրա», «Կերպարվեստ», «Նախնական զինվորական պատրաստություն /ՆԶՊ/» առարկաների բողոքարկված առաջադրանքները քննարկվել են, և արդյունքները փոփոխության ենթակա չեն:

«Ռուսաց լեզու» առարկայից բողոքարկված առաջադրանքները քննարկվել են, և արդյունքները փոփոխության ենթակա չեն: Տեխնիկական խնդրի պատճառով ճիշտ պատասխաններում հրապարակվել է վրիպակ, 4-րդ թեստի 23-րդ առաջադրանքում ճիշտ պատասխան է 4-ը՝ 1-ի փոխարեն, բոլոր ատեստավորվողներին, ովքեր այս առաջադրանքում նշել են ճիշտ պատասխան 4-ը, տալ միավոր:

«Շախմատ» առարկայի 2-րդ, 3-րդ և 4-րդ թեստերի 54-րդ առաջադրանքի ճիշտ պատասխաններում տեխնիկական խնդրի պատճառով հրապարակվել են վրիպակներ. 2-րդ թեստի 54-րդ առաջադրանքում ճիշտ պատասխան է 4-ը՝ 3-ի փոխարեն, բոլոր ատեստավորվողներին, ովքեր այս առաջադրանքում նշել են ճիշտ պատասխան 4-ը, տալ միավոր: 3-րդ թեստի 54-րդ առաջադրանքում ճիշտ պատասխան է 1-ը՝ 4-ի փոխարեն, բոլոր ատեստավորվողներին, ովքեր այս առաջադրանքում նշել են ճիշտ պատասխան 1-ը, տալ միավոր: 4-րդ թեստի 54-րդ առաջադրանքում ճիշտ պատասխան է 2-ը՝ 1-ի փոխարեն, բոլոր ատեստավորվողներին, ովքեր այս առաջադրանքում նշել են ճիշտ պատասխան 2-ը, տալ միավոր:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ